ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Երևան-0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն) ս.թ. մայիսի 29-ին թիվ Ե/1290-24 գրությամբ դիմել է վարչապետի աշխատակազմ՝ հայտնելով հետևյալը.

Ղեկավարվելով «Պետական վերահսկողական ծառայության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով՝ Ծառայությունն իրականացրել է ՀՀ վարչապետի աշխատակազմի կարիքների համար շենքերի և շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀՎԱ-ՀԲՄԽԾՁԲ-24/1» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) վերլուծություն, որի արդյունքում պարզվել է, որ գնումների պաշտոնական տեղեկագրում ս.թ. մայիսի 13-ին հրապարակված՝ պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության համաձայն Ընթացակարգի շրջանակում ընտրված մասնակից է ճանաչվել «ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊ ընկերությունը (ՀՎՀՀ՝ 00155844) (այսուհետ՝ Ընկերություն):

Համաձայն իրավաբանական անձանց պետական ռեգիստրի պետական միասնական գրանցամատյանի՝ 2016 թվականի հուլիսի 8-ից Ընկերության տնօրեն է հանդիսանում Արման Հայրապետի Խալաթյանը:

Ծառայությանը հասանելի տեղեկատվական շտեմարաններում առկա տեղեկատվության վերլուծությամբ պարզվել է, որ «ՀՏ-ՊՐՈԵԿՏ» ՍՊ ընկերությունը (ՀՎՀՀ՝ 00229138) 2022 թվականի հունիսի 22-ից մինչև 2024 թվականի հունիսի 22-ը (17.12.2022թ.-11.05.2023թ. ժամանակահատվածում հանվել է ցուցակից՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի ԵԴ/ 32833/02/22 որոշման հիման վրա) ներառված է գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ծառայության կողմից մատնանշվել է նաև այն փաստը, որ Ընկերության տնօրեն Արման Հայրապետի Խալաթյանի և «ՀՏ-ՊՐՈԵԿՏ» ՍՊ ընկերության միջև առկա է փոխկապակցվածություն, մասնավորապես՝ Ընկերության տնօրեն Արման Հայրապետի Խալաթյանը 2020 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև օրս հանդիսանում է նաև «ՀՏ-ՊՐՈԵԿՏ» ՍՊ ընկերության տնօրեն և բաժնետեր:

«Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ (...) գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նույն կետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 119-րդ կետի 2-րդ ենթակետի «գ» պարբերության համաձայն՝ գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության իմաստով՝ ֆիզիկական և իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից կամ եթե տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ընտանիքի անդամը հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի խորհրդի նախագահ, խորհրդի նախագահի տեղակալ, խորհրդի անդամ, *գործադիր տնօրեն*, նրա տեղակալ, գործադիր մարմնի գործառույթներ իրականացնող կոլեգիալ մարմնի նախագահ, անդամ (...): Ընդ որում, Կարգի 121-րդ կետի համաձայն՝ *մասնակցի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:*

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ *հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող (...), ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում սպանձնված պարտավորության խախտում:*

Համադրելով Ծառայության գրությամբ ներկայացված փաստական հանգամանքները և վկայակոչված իրավանորմերը՝ արձանագրում ենք, որ «ՀՀՎԱ-ՀԲՄԽԾՁԲ-24/1» ծածկագրով գնանշման հարցման շրջանակներում Ընկերության հայտով ներկայացված հավաստումն առ այն, որ «Ինժեներինգ» ՍՊ-ն և իրեն փոխկապակցված անձինք բավարարում են հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, չի համապատասխանել իրականությանը, քանի որ Ընկերության տնօրեն Արման Հայրապետի Խալաթյանը 2020 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև օրս հանդիսանում է նաև Ընկերության կողմից հայտը ներկայացնելու օրվա դրությամբ գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված «ՀՏ-ՊՐՈԵԿՏ» ՍՊ ընկերության տնօրեն և բաժնետեր՝ փաստացի համարվելով վերջինիս հետ փոխկապակցված անձ: Նշված հանգամանքը

ինքնաբերաբար հանգեցնում է Ընկերության գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման: Հետևաբար, *Ընկերությունը՝ գնման գործընթացի շրջանակներում ներկայացնելով իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն՝ խախտել է իր իսկ հայտով ստանձնված պարտավորությունը:*

Հիմք ընդունելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված իրավակարգավորումները և հաշվի առնելով ՀՀ պետական վերահսկողական ծառայության վերոնշյալ գրությամբ հայտնի դարձած հանգամանքները՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 30.05.2024թ. կայացած նիստին որոշեց չեղարկել պայմանագիր կնքելու մասին որոշումը և մերժել «ՀՀՎԱ-ՀԲՄԽԾՁԲ-24/1» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի շրջանակներում հայտ ներկայացրած «Ինժեներինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ առկա են «Ինժեներինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությամբ սահմանված հիմքերը և որոշում եմ՝ Ընկերությանը ներառել նշված ցուցակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ ԳԱՐԻԿ ԲՈՇՅԱՆ

Կատարող՝ Լուսինե Գասպարյան
Գործերի կառավարչի տեղակալ
Հեռ. 515663
Էլ փոստ՝ lusine.gasparyan@gov.am